

ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ (ՀՀ ՎՊԽ) ՆԻՍՏԵՐ

23.11.2007թ. նիստին

Մասնակցում էին՝

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Գ. Անանյանը, Գ. Գևորգյանը, Վ. Դավթյանը, Յու. Պողոսյանը, Ա. Շաբոյանը, Ա. Աղազարյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար Հ.Գրիգորյանը:

Հրավիրված էին՝

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ. Միրզոյանը, ՀՀ ԱՎԾ նախագահի գլխավոր խորհրդական Ջ. Միրզոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Վ. Մարոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա. Սաֆյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի պետ Գ. Մարտիրոսյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի բիզնես ռեգիստրի բաժնի պետ Լ. Հարությունյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի գլխավոր մասնագետ Ա. Դաշյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ն. Բաղդասարյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ Մ. Ծատուրյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի առաջին կարգի մասնագետ Ա. Հակոբյանը, Վ. Դանիելյանը և Դ. Մարտիրոսովան:

Նիստում լավեցին հետևյալ հարցերը.

1. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 2006 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանագերծված տվյալների բազան Համաշխարհային Բանկի Երևանի գրասենյակին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Ձեկուցող՝ Գ. Գևորգյան/

Որոշեցին՝

Թույլատրել տրամադրել, «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 2006 թվականին իրականացված տնային

տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանագերծված տվյալների բազան Համաշխարհային Բանկի Երևանի գրասենյակին, զուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չհրապարակելու և այլ կարգով չտարածելու պայմանով:

/Անհատական/

2. «Հայաստանի Հանրապետությունում արտաքին առևտրի գների ինդեքսի ամսական պարբերականությամբ հաշվարկման մեթոդաբանությանը հավանություն տալու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Գ. Մարտիրոսյան/

Որոշեցին՝

Հավանություն տալ Հայաստանի Հանրապետությունում արտաքին առևտրի գների ինդեքսի ամսական պարբերականությամբ հաշվարկման մեթոդաբանությանը:

/Անհատական/

3. «Անհատ ձեռնարկատերերի վիճակագրական բիզնես (ձեռնարկատիրական) ռեզիստրի հարցաթերթը (տարեկան)» և լրացման հրահանգը» հաստատելու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2003թ. մարտի 14-ի թիվ 05-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Լ. Հարությունյան/

Որոշեցին՝

Հաստատել «Անհատ ձեռնարկատերերի վիճակագրական բիզնես (ձեռնարկատիրական) ռեզիստրի հարցաթերթը (տարեկան)» և լրացման հրահանգը՝ համաձայն հավելվածի և ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2003 թվականի մարտի 14-ի «Անհատ ձեռնարկատերերի վիճակագրական բիզնես (ձեռնարկատիրական) ռեզիստրի հարցաթերթը» եւ «Անհատ ձեռնարկատերերի վիճակագրական բիզնես (ձեռնարկատիրական) ռեզիստրի հարցաթերթի լրացման կարգի մասին հրահանգը»:

/Նորմատիվ/

4. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

4.1. Հաղորդում Ֆիլիպինների Մանիլա քաղաքում 01.10-03.10.2007թ.տեղի ունեցած «Հազարամյակի զարգացման նպատակների վիճակագրություն» թեմայով միջազգային կոնֆերանսին մասնակցելու վերաբերյալ:

/Ձեկուցող՝ Ս. Մնացականյան, Ա. Սաֆյան/

4.2. Հաղորդում Չեռնոգորիայի (Մոնտենեգրո) Հերցեգ Նովի քաղաքում 02.10-05.10.2007թ. ԱՄՆ Միջազգային Ջարգացման Գործակալության կողմից կազմակերպված «Կոմունալ ջրամատակարարման կառավարման լավագույն մեթոդները, ֆինանսական և ներկայացման բարելավում» խորագրով սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

/Ձեկուցող՝ Յու. Պողոսյան/

4.3. Հաղորդում Ֆրանսիայի Փարիզ քաղաքում 02.10-05.10.2007թ. տեղի ունեցած «Ազգային հաշիվների և ֆինանսների վիճակագրության վերաբերյալ» աշխատանքային հանդիպման մասին:

/Ձեկուցող՝ Վ. Դանիելյան/

4.4. Հաղորդում Շվեդիայի Ստոկհոլմ քաղաքում 08.10-12.10.2007թ. կայացած «Շրջակա միջավայրի վիճակագրություն» թեմայով աշխատանքային հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

/Ձեկուցող՝ Յու. Պողոսյան, Ա. Սաֆյան, Ն. Բաղդասարյան, Մ. Ծատուրյան, Ա. Հակոբյան/

4.5. Հաղորդում Չինաստանի Պեկին քաղաքում 22.10-25.10.2007թ. կայացած Միավորված ազգերի կազմակերպության Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության կողմից կազմակերպված «Պարենային ապահովության վիճակագրությունը և տեղեկատվությունը ենթաազգային մակարդակով աղքատ և շատ աղքատ բնակչության որոշման համար» թեմայով աշխատանքային հանդիպմանը և գյուղատնտեսության վիճակագրության 4-րդ միջազգային կոնֆերանսին մասնակցելու վերաբերյալ:

/Ձեկուցող՝ Դ. Մարտիրոսովա/

Որոշեցին՝

Արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին հաղորդումներն ընդունելի գիտություն:

/Անհատական/

14. 12. 2007թ. նիստին

Մասնակցում էին՝

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Գ.Անանյանը, Գ. Գևորգյանը, Յու. Պողոսյանը, Ա. Շաբոյանը, Ա. Աղազարյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար Հ. Գրիգորյանը:

Հրավիրված էին՝

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ.Միրզոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի գլխավոր մասնագետ Ա. Կարապետյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ն. Բաղդասարյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ Գ. Գյուրջյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի շինարարության վիճակագրության բաժնի պետ Լ. Պետրոսյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետի պաշտոնակատար Ա. Գյուլբենկյանը:

Նիստում լավեցին հետևյալ հարցերը.

1. ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի կողմից իրականացվող «2008թ. հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության հարցաթերթը և օրագիրը հաստատելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ա. Գյուլբենկյան/

Որոշեցին՝

Հաստատել «Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտություն» հարցաթերթը և օրագիրը համաձայն հավելվածի:

/Անհատական/

2. ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2004թ. մայիսի 17-ի «ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովների գործունեության վերաբերյալ» ձև թիվ 7 վարչական վիճակագրական հաշվետվության ձևին հավանություն տալու մասին» թիվ 07 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած համանուն հաշվետվության ձևում փոփոխություններ և լրացումներ նախատեսող նախագծին հավանություն տալու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ն. Բաղդասարյան/

Որոշեցին՝

Հավանություն տալ «Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովների գործունեության վերաբերյալ» ձև թիվ 7 վարչական վիճակագրական հաշվետվության ձևում կատարված փոփոխություններին և լրացումներին:

/Անհատական/

3. «Օբյեկտների գործարկման և շինարարական աշխատանքների կատարման մասին» ձև թիվ 1-կ2 (ամսական), «Օբյեկտների, հիմնական միջոցների գործարկման և շինարարության իրականացման մասին» ձև թիվ 2-կ2 (տարեկան), պետական վիճակագրական հաշվետվության ձևերը և «Օբյեկտների, հիմնական միջոցների գործարկման և շինարարության իրականացման մասին» ձև թիվ 2-կ2 (ամսական) պետական վիճակագրական հաշվետվությունների լրացման մեթոդական ցուցումները հաստատելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Լ. Պետրոսյան/

Որոշեցին՝

- Հաստատել «Օբյեկտների գործարկման և շինարարական աշխատանքների կատարման մասին» ձև թիվ 1-կ2 (ամսական),
- «Օբյեկտների հիմնական միջոցների գործարկման և շինարարության իրականացման մասին» ձև թիվ 2-կ2 (տարեկան),
«Օբյեկտների հիմնական միջոցների գործարկման և շինարարության իրականացման մասին» ձև թիվ 2-կ2 (ամսական)՝ պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերն, լրացման մեթոդական ցուցումները, համաձայն հավելվածների:

Միևնույն ժամանակ.

- ՌԻժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2005 թվականի նոյեմբերի 18-ի «Օբյեկտների գործարկման և շինարարական աշխատանքների կատարման մասին» ձև թիվ 1-կ2 (ամսական)»,

- Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի օգոստոսի 9-ի «Օբյեկտների հիմնական միջոցների գործարկման և շինարարության իրականացման մասին» ձև թիվ 2-կ2 (տարեկան)»,

- Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2007 թվականի հունիսի 18-ի «Օբյեկտների հիմնական միջոցների գործարկման և շինարարության իրականացման մասին» ձև թիվ 2-կ2 (ամսական)՝ պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերը, լրացման մեթոդական ցուցումները հաստատելու մասին թիվ 27-Ն, թիվ 132-Ն և թիվ 11-Ն որոշումները:

/Նորմատիվ/

4. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

4.1. Հաղորդում Շվեյցարիայի Ժնև քաղաքում 13.11–15.11.2007թ. տեղի ունեցած «ՄԱԿ Մանկական Հիմնադրամի հրավերով MONEE ծրագրի շրջանակում անդամ երկրների համակարգողների հանդիպմանը» մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Գ. Գևորգյան, Ա. Գյուլբենկյան/

4.2. Հաղորդում Շվեյցարիայի Ժնև քաղաքում 15.11–16.11.2007թ. Աշխատանքի Միջազգային Կազմակերպության (ԱՄԿ) հրավերով «Աշխատանքային հարաբերությունների կառավարման միջոցով աշխատանքի արդյունավետության ապահովում» խորագրով «Մուլթի Ֆորում 07»-ին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Գ. Գևորգյան/

4.3. Հաղորդում Լյուքսեմբուրգ քաղաքում 06.12–07.12.2007թ. տեղի ունեցած Եվրամիության վիճակագրական ծառայության (Եվրոստատ) կողմից կազմակերպված «Ժամանակակից վիճակագրությունը ժամանակակից հանրության համար» խորագրով կոնֆերանսին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Ս. Մնացականյան, Ս. Սաֆյան/

Որոշեցին՝

Արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին հաղորդումները ընդունելի գիտություն:

/Անհատական/

24. 12. 2007թ. նիստին

Մասնակցում էին՝

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Գ.Ամանյանը, Գ. Գևորգյանը, Յու. Պողոսյանը, Վ. Դավթյանը, Ա. Շաբոյանը, Ա. Աղազարյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար Հ. Գրիգորյանը:

Հրավիրված էին՝

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ.Միրզոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավար Ա. Հայրապետյանը, ՀՀ ԱՎԾ նախագահի գլխավոր խորհրդական Ջ. Միրզոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Վ. Սարոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա. Սաֆյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական տեղեկատվության տարածման և մարկետինգի բաժնի պետ Ն. Մուշեղյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ Գ. Գյուրջյանը:

Նիստում լսվեցին հետևյալ հարցերը.

1. «2008 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագիրը» հաստատելու մասին» հարցը:

/Ձեկուցող՝ Ն. Մուշեղյան/

Որոշեցին՝

Հաստատել «2008 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագիրը» համաձայն հավելվածի:

/Նորմատիվ/

2. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 2005 և 2006 թվականներին իրականացված տնային տնտեսությունների ամբողջացված հետազոտությունների արդյունքում ձևավորված անվանագրված տվյալների բազաները Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետի հետազոտական խմբի ղեկավար Հ. Մարգարյանին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Ձեկուցող՝ Գ. Գևորգյան/

Որոշեցին՝

Թույլատրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնին՝ Երևանի

պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետի հետազոտական խմբի ղեկավար Հ. Մարգարյանյանին տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 2005 և 2006 թվականներին իրականացված տնային տնտեսությունների ամբողջացված հետազոտությունների արդյունքում ձևավորված անվանագերծված տվյալների բազաները՝ զուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չհրատարակելու և այլ կարգով չտարածելու, պայմաններով:

/Անհատական/

3. Հաղորդում արտասահմանյան գործուղման հաշվետվության մասին.

Շվեյցարիայի Ժնև քաղաքում 04.12–06.12.2007թ. տեղի ունեցած ՄԱԿ-ի և Եվրոպայի Տնտեսական Հանձնաժողովի «Միջազգային միգրացիայի վիճակագրություն» տարածաշրջանային սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

/Ձեկուցող՝ Գ. Գևորգյան/

Որոշեցին՝

Արտասահմանյան գործուղման հաշվետվության մասին հաղորդումը ընդունել ի գիտություն:

/Անհատական/